

գինէտանն զրան դիմացը մութ քէմէր մի . ձախ կողմն փայտի տուն երկու դարէ որ անդ իստիթ անեն զփայտն մինչ որ 'ի դուռն դայ . և գիտենան որ տարեգուխն կու օգտէ : կայ սակաւ մի յառաջ փոքր դուռ . մի քէմէր . և 'ի քովն սորայ՝ զագանի օտան . և սակաւ մի յառաջ գործելու տունն . և 'ի դիմաց սորայ երկու հանգստարան . և կայ անդ տասը ոտք մէրտէւէն . 'ի վեր ելանելն 'ի բաց կայ մեծ քէմէր մի , որ լիւան կոչի , որ թարգմանի մոմխանայ . առաջքն բաց , անդ թափեն զմոմն , և կայ սորայ առջևն փոքր սէթ հողէ . և 'ի սէթն մէջ տեղն տիշզ մէրմէր մի , որ զմոմն անդ փէրտան կ'անեն . սորայ կոնակն մեծ օտայ մի , զինչ և իցէ անդ դնեն , և քովն պղտի դուռ մի . ներս մըտանես աջ կողմն ճըկէ դուռ մի այլ , որ մոմին օտան է . անդ կայ սնտուկներ և տօլապ . երկու մոմն մէկ փարայ՝ պաշխայ է , փարանոցն՝ պաշխայ է , և զամենայն պապէթովն լրցեր են մինչև 'ի բերան սընտկացն . և սօլէրն կախեալ կայ անդ , որ միաբանից կուտան : Եւ այս լիւանն նշխարք գործած ժամանակն տեսանես , որ մեծ պահուց երկու քումշաբթուն երկուշաբթի սկսեն մինչ և ուրբաթ հազիւ կու վճարեն : Ալիւրն որ կու հարցանես , ընդ ամէնն տասուեր կու քիւայ է , մինչև քառաւն հոգի կու նստի կամ թէ այլ աւելի , շախայով քիշրիշտիով շէնիլիքով կու գործեն ոտաց վերայ . այլ հինգ վեց հոգի սինեստանով կու տանեն եփողին . եփողն երկու հոգի է , մինն Պապիկն և միւսն Յովակիմն . և ջախջի քարէ յերէ ծեփած է . ներքեն օճախ կու վառեն և ներքոյ վերն՝ դիմացէ դիմաց նստեալ կու եփեն . և պարոն ոմն կ'առնէ զէնպիլով տանի ներս սփուէ : Եւ 'ի մօտ զատկին ծախեն ըխտաւորաց վեցն 'ի փարայ մի :

Այս լիւանին առջեն պախչայ մի կայ փոքր , և սորայ քովն չորս դատէմէ , և է փոքր տանիս մի . և իջնիլն 'ի վայր պէրպէրի զանութ մի , տարախլըի ՚

¹ Սանտերու տեղ :

տեղ , նստելու տեղ , սիրիլ կախելու տեղ , լէնէկի տեղ . և այլ ինչ որ պիտոյ է սափրիչին , որ ատեն մի Պապիկն այն օտան զմիաբանքն կու ածիլէ եղեր : Եւ սայ խանութին մէջ տեղն կայ փոքր օտայ մի . սորայ քովն պուճախ տեղն հոր մի , և քովն փոքր մութվախ մի . սորայ յետեն սուրբ Ստեփանոսին խորանին կոնակն է : Եղ գուրա , սիրելի , եկլիւանին առջեւ . աջ կողմն նշխար եփելու տեղն . և սորայ քով փոքր դուռ մի . ներս մուտ մեծ օտան չուխայի և ունի չորս երկաթ տափակ չենպէր , և զինճիլ . 'ի վերայ սորայ մեծ կղպակ մի , և ունի երկու քրէնկ քիլիտի , և կայ քովն մէկ փոքր օտայ մ'այլ . և ունին առաջն թղենի ծառ մի . դրսի դիչն աջ կողմն ճկէ , գնայ ներս . երկու զատէմէ , քսաննեմէկ ատըմ երկայնութին . անդ է մոմճի Սրապին օտան երկու . և անդ է իմիրզէ սօլկարին տօլապն ներքեսով և վերայով , և է օտայ մ'այլ որ իմիրզէն անդ կու նստի . իջի վայր գնայ դուրս : Այսուհետեւ ելանելոց եմք սեղանատունն և տանիս :

Իրշարունակուի :

Սիւէզի չրանցը և խտալիա .

(Տես էջ 158:)

Սիւէզի պարանոցը , ջրանցքին պեկմանն համար որոշեալ տեղը , հիւսիսէն դէպ 'ի հարաւ 150 հազարամէդր երկայնութիւն ունի . իսկ ջրանցքին երկայնութիւնն 160 հազարամէդր է՝ տեղ տեղ ուղղութենէն խոտորած ըլլալուն պատճառաւ :

Աս երկայնութեան վրայ 18 հազարամէդր տեղ մը կայ՝ որուն մէջ պարունակուած երկիրն զրեթէ խաղաղ ծովուն հարթութեան կը հաւասարի , կամ քանի մը տասնորդամէդր աւելի բարձր է . ծովուն երեսէն 36 հազարամէդր տեղ բարձր է մէկ մէդրէն առառաւելն մինչև ց19 , բայց քիչ տեղ .

106 Հաղարամէդր տեղ երկիրը ծովուն երեսէն աւելի ցած է, և արդէն մէկ մասը ջրով ծածկեալ, ինչպէս են Մենցալէն և Պալլահ լճերը. իսկ միւս խորահոս յատակները ցամքած են, ինչպէս Դիմասհ և ուրիշ աղի լճերը:

Համեմատելով երկրին փորուելիք մասերը արդէն խորափոր եղող մասերուն հետ, այս վերջինները շատ աւելի են առջիններէն:

Երկրին բնութիւնը զանազանէ: Մեծ մասը աւագուտ է այլ և այլ աստիճանի, ամենանուրը և անխառն տեսակէն սկսելով ինչուան կրով, գաճով և կաւով տեսակներն ալ կը գտնուին: Ետքը կու գայ կաւը՝ որ մեծ քանակութեամբ կը գտնուի՝ անխառն ու խտացեալ, և երբեմն նաև կրի, գաճի և տղմի հետ խառնուած. յետոյ ընդ առաջ կ'ելլեն կրային կոյտերու խաւեր, բայց 10 կամ 30 հարիւրորդամէդր խտացեալ թանձրութեամբ, սակաւ ուրեք ալ մէկ մէդր: Միայն բացառութիւն կը սեպուի կրային ժայռերու կարկառ մը որ 'ի ֆալուֆ հանդիպեցաւ, և ջրանցքին առանցից վրայ գրեթէ հինդհարիւր մէդր երկայնութիւն ունի, 2-3 թանձրութեամբ. նոյն տեղը կը հանդիպին նաև բնութեամբ նոյնանման նիւթեր ու այնպէս խտացած, որ ական պէտք կ'ըլլայ զանոնք ճղբելու համար: Միւս գտնուած նիւթերը՝ ինչպէս ծմբուտ և ածխուտ կրի (il solfato, il carbonato di calce) ածխուտ մագնէզիոյ (il carbonato di magnesia), աւելի երկրաբանին հետաքրքրութեան նիւթեն, քան թէ կարեռութիւն կամ՝ գժուարութիւն ունին պեղման համար:

Պարանոցին կերպաւորութենէն ու երկրաբանական կազմութենէն դիւրաւ կը տեսնուի որ բնութիւնն արգելք չգրաւ, բաց 'ի վերոյիշեալ կարկառէն, որ ջրանցքին այն երկայնաձիգ գծին դրեթէ երեքհարիւրորդ մասն է: իսկ մնացած այլ ամենայն նիւթերը դիւրին է հանել, թէ մարդու ձեռքը և թէ զօրութեամբ մեքենայից:

Գլխաւոր գժուարութիւնն այս էր որ

ջրանցքին բովանդակ երկայն գիծը անապատին մէջէն պիտի անցնէր:

Պարանոցին վիճակը միշտ նոյնպէս չեղաւ, ունեցաւ նաև իր յաջողութեան ժամանակներն. և եթէ պատմութիւնը լու շրեղ մնացորդք կը վկայեն այսմ: Նոյնպէս սոյնը կը հաստատեն Նիլոսի աղմին բաղմաթիւ կարգերն, որը ջրանցքին պեղմանց մէջ կը գտնուին: Անցեալ դարերու մէջ ծաղկած գլխաւոր քաղաքներէն մէկ քանին ուղերով յիշատակել, յիշեմ ջրանցքին երկու կողմինները և նախ Դնիս-Սան քաղաքը, որ Քրիստոսէ երկու հազար և աւելի տարեգը առաջ բնակութիւն էր հովիւթագաւորաց, և Հռամնէս (Հռամեսակամ Ուամեսա) քաղաքն ստէպ յիշատակեալ 'ի Սուրբ Գիրս, երկուքն ալ ջրանցքին աջ կողմը. իսկ Պելուսիոն. Միկող կամ Մակաուլում ու Արսինոյէ քաղաքներն ալ ձախ կողմանէ են, որոնց մէ առաջինն ու վերջինը նաև Հռովմայեցւոց ատեն ալ ծաղկեալ էին, և մեծ ճամբով մ'իրարու հետ միացեալ, որուն հետքը տակաւին շատ տեղ կը տեսնուին: Բայց աս ամէն քաղաքներն ալ անհետացան. այժմեան ամենէն նոր աւերակները հազար տարիէն աւելի հնութիւն ունին. ուրեմն երկու ծովերը միացնելու համար պէտք էր 160 հազարամէդր երկայնութեամբ մերկ անապատ մը կտրել անցնիլ:

Կարմիր ծովն Միներկրականին հետուիդ ջրանցքով միացընելուն գաղափարը մեր ժամանակիս է. իսկ խոտոր հաղորդակցութեանը՝ Նիլոսի ճամբով, ոչ միայն հին, այլ և շորս անզամ 'ի գործ դրուած է: Հոս չերկնցնելու համար զանց կ'ընեմ առջի փորձերը պատմել թէ ինչպէս կամ ինչու. համար 'ի գերեւ ելան. միայն աւարտեալ գործոյն միտ զնելով, կը նշանակեմ որ առջի ջրանցքն փորուեցաւ կամ լմնցաւ՝ դարեհի՝ որդույն կամբիւսեայ՝ Պարսից թագաւորին ժամանակ, որ տիրեց Եգիպտոսի, և Հերոդոտեայ ստորագրած ջըրանցքը որուն մէջ քալած է, 400 տարի յառաջ է քան գիրիստոս. երկրորդ

Դը Պալոմէս Փիլագելփոս բացաւ, գրեթէ 260 տարի յառաջ քան զՔրիստոս . երրորդն Աղրիանոս կայսեր ժամանակը, Քրիստոսէ 140 տարի ետքը, իսկ չըրրորդը՝ Օմար խալիֆային անուանի Ամրու զօրավարին ատենը, որ Եզիպտոսի տիրեց, 640 տարի յետ Քրիստոսի: ինչպէս որ առջի փորձերուն և գործոյն աւարտմանը վրայօք մանրամասն պարագայից չինյա, նոյնպէս նաև չեմ ուզեր մէջ բերել անոնց վերաբերեալ զանազան կարծիքներն . ատոնցմէ ումանց տակաւին ոչ միայն հետքերը կան, այլ և կարեոր մնացորդներ շատ մը հազարամէզրի երկայնութեամբ: Հաւանական է որ այդ թագաւորներէն ամէն մէկն շահեցուցած ըլլայ իր նախորդաց ջրանցքը ըստ մասին աւելի լաւ վիճակի մէջ դնելով զայն, և մասնաւոր խնամքով այն պատճառներուն առջեն առնելով որոնց համար պահանջուած արդիւնքը չեր տար. գիտնալու է զիսաւորապէս որ այս հաղորդակցութիւնը խոտոր էր: Իսկ թէ ինչու ուրեմն այս բանիս գործակատար հնագոյն թագաւորը նախամնար սեպեր է նիւլսի հետ հաղորդակցութիւնը շատ դիւրին է բացատրելն, երբ մտածենք՝ որ այն ատեն շատ կարեոր էր Ստորին Եզիպտոսի հաղորդակցութիւնն ընդ կարմիր ծովու, և ոչ թէ, Միջերկրականին հետ:

Միջերկրականին վաճառականութիւն հիմակուանին պէս տարածեալ պէտք չէ մտածել: Յունաստան, Մեծն Յունաստան, Մարսիլիա, Փիւնիկէ և կարգեղոն, յիրաւի Միջերկրականին մէջ վաճառականութիւն կ'ընէին, և ըստ ժամանակին և ըստ պարագային՝ կըրնայ նաև կարեոր վաճառականութիւն մը համարուիլ. բայց գրեթէ բոլոր Փարաւոններուն հարստութեանց հաստատուն քաղաքականութեամբն Եզիպտոսանմասն էր յայսմ, և ընդհակառական մեծ վաճառականութիւն ունէր Արևելքի հետ: Դարեհի յաջորդներն թէպէտ այն պիսի հանգամանաց մէջ որք զեզիպտոս առս աւելի ևս կը մօտեցընէին հարա-

ւային Եւրոպիոյ որ ան ատենը մի միայն քաղաքականացեալն և վաճառաշահն էր, չէին կրնար բոլորովին լմնցնել այնպիսի մեծ գործ մը որով միայն կարճեցնէին երկու ծովերուն մէջի ճամբան, և այսպէս հաղորդակցութիւնը միշտ խոտոր մնաց և նիլոսի ճամբով: Եւ թէ ճիշդ երբ զաղրեր է, անկարելի է ըսելը. բայց խալիֆայից բարբարոս կառավարութիւններն որք յաջորդեցին՝ մեկնութիւնը կու տան:

Եօթնևտաներորդ դարուն մէջ վերըստին ծաղեցաւ երկու ծովերը իրարու հետ հաղորդելու խորհուրդը, և մեծահանճար մարդ մը կ'առաջարկէր զայն զօրաւոր թագաւորի մը: Լէյանից՝ գերմանացի մեծ իմաստասէրը, նամակ մը գրեց առ լուգովիկոս ԺԴ, յորում կ'առաջարկէր անոր իբրև գործ մը արժանաւոր իրեն և գարուն, Եզիպտոսի աշխարհակալութիւնը, որպէս զի յետոյ ջրանցքով մը երկուց ծովուց իրարու հետ հաղորդակցութիւնն հաստատէ: Առաջարկութիւնն արդիւնք չունեցաւ, բայց յիրաւի արժանի էր թէ անոր որ զայն կ'առաջարկէր, և թէ անոր՝ առ որ ուղղեալ էր: Մարդկային ցեղի այս հըսկաներէն ուրիշ մ'ալ, դար մը ետքը ձեռք զարկաւ գործոյս, և էր Պոնաբարդէ: 1798ին Եզիպտոսի հոչակաւոր արշաւանաց ատեն՝ ուրիշ յաջողակ մարդիկներու հետ մէկտեղ տարաւ նաև զլըրէր (Lepère), որ կամրջաց և ճանապարհաց առաջին ճարտարապետն էր. ասոր յանձնեց պարանոցը հարթելու գործը, երկուց ծովուց մակարդակը հարթ հաւասար ընելու համար, որովհետև հին աւանդութիւն մը կարթէ կարմիր ծովն աւելի բարձր է քան զՄիջերկրականն: Պատերազմի խառնակութեանց մէջ, և արդի կատարելագործեալ գործիքներէն շատ աւելի անկատարներով գործովութիւնը զլուխ հանուեցաւ: Եզրակացութիւնն հաստատեց հին կարծիքը, զոր նաև Արիստոտէլ ալ վճռեր էր, և իրմէ ալ շատ առաջ չեմ զիտեր որպիսի պատգամներ: Յարմարութիւնն այնպէս բերաւ որ եզ-

րակացութիւնը գրեթէ ճիշդ կերպով միաբանի, նաև չափին մէջ ալ, անհարթութեան հին կարծիքին հետ, և (մեր չափերուն վերածելով) գրեթէ 10 մէղը էր (9,907) տարբերութիւնը։ Լարլաս երեխի չափաբերն՝ յանուն գիտութեան հակառակեցաւ ան եզրակացութեան և իբրև սխալ համարեցաւ զայն։ Գիտեն ամէնքը որ Պոնաբարդէի Եգիպտոսի արշաւանքն ինչ վերջ ունեցաւ, և ալ նոյնպիսի առաջարկութեանց վրայօք չխօսուեցաւ։ և հասարակաց մրտաց մէջ հաստատուեցաւ պատգամատուաց և Արխստոտէլի վճիռը, և այն կարծիքը տիրեց թէ կարմիր ծովը բարձը է քան զՄիներկրականն։ Սակայն նաև ինքնին լըբէր խոտոր հաղորդակցութեան խորհուրդ տուաւ Նիլոսի ճամբով։

1820ին իտալացի մը որ Եգիպտոս կը բնակէր, կէտինի Պոլոնիացին, համոզուած չըլլալով այն զարտուղութեանը, դարձեալ երկուց ծովուց հարթութիւնը չափեց և երկուքինն ալ հաւասար գտաւ։ կեսնէյ անգլիացին ալ կրկնեց զայն 1834ին, և ճիշդ նոյնպէս գտաւ։ Ոչ ոք ուշ զրաւ խեղճ կէտինիին, և ոչ ոք նախ մեծ յարդ մը տուաւ կեսնէյի ըսածին, բայց կը մօտենար ժամանակը յօրում խնդիրը գործնական երեսոյթ մը պիտոր առնուր։

1832ին Պ. ֆերտինանտոս տը լէսսէքս Գաղղիոյ կողմանէ ընդհանուր հիւպատոս զրկուեցաւ յԵգիպտոս, և վարեց իր պաշտօնը մինչև ՚ 1838։ Սոյն ժամանակին մէջ երկու ծովերուն մէջ բացուելիք անցքին մեծ խնդրոյն պարապեցաւ։ բարեկամացաւ Սայիտ փաշային հետ՝ որ ան ատեն Եգիպտական գահին համարեալ ժառանգներէն էր, յարմար առիթ առաւ զինքը՝ գործոյն մեծամեծ օգուտները թէ Եգիպտոսի և թէ բոլոր ուրիշ երկիրներուն նկատմամբ պաշտպանելու համար, որոնց հաղորդ պիտի ըլլային կրնանք բաել հողագնտոյս երեք քառորդ մասը։ Աս գործերէն մէկն ալ էր նաև անմահացընել իշխանին յիշատակը որ խրախոյս

կու տար և կ'օգնէր։ ուստի առանձնաւ կան կենաց հանգստութեան մէջ Սայիտ փաշայ կրցաւ մշակել և գգուել այսպիսի մեծ գաղափարը։ և երբ 1854ին զահն ելաւ, Պ. ֆերտինանտոս տը լէսսէքս անյապաղն ներկայացաւ իրեն, այս խնդրոյն ոգի տալու համար, և միշտ յօժար գտաւ զիին պաշտպանը։ Այսպիսի մեծ գործոյ մը մէջ, որ խիստ մեծ ազգեցութիւն պիտի ունենայ ազգաց յառաջադիմութեան վրայ, պէտք է յիշել առաջին հետամուտները, մանաւանդ որ այնպիսի բաներու վրայ էր խնդիրը՝ որ հարկադրուեցան մեծամեծ դժուարութեանց յաղթել, և անկարելի հրատարակեալ առաջարկութեանց։ Ասոր համար կ'ուզեմ յիշատակել թէ ով եղաւ առաջին այս առաջարկութեանս պարապող արուեստագիտաց մէջէն, այն ինքն է ճարտարապետն լինան տը Պէլֆոն որ եզիպտական տէրութեան ծառայութեանը մէջ կը գտնուէր, և ինքն այս բանիս զբաղեցաւ 1833ին, և լըբերի ըրած փորձերէն օգտուելով, ուղիղ ջրանցք մը զծեց՝ յաղթելով կարծեցեալ հարթութեան անհաւասարութեանը։ այս արուեստական քննութիւններն առաջիններն են, և ինչպէս որ կը տեսնուի, 34 տարի առաջ եղած են։

Տեսանք թէ ինչպէս 1834ին Պ. կեսնէյ հարթութեան անհաւասարութեան կարծիքը սխալ հանեց, և ոչ ոք կամշատ քիչ անձինք անոր ուշ զրին։ բայց սակայն, ինչպէս որ քիչ ետքը սկսաւ լէսսէրափ հրատարակութիւնն՚ի պաշտպանութիւն ուղիղ ջրանցքին, տեղն է ըսելը թէ կեսնէյի վճիռը Սնգլիա ալ հասաւ, վասն զի 1844ին անգլիացի ջրաբաշխական մասնաժողով մը կրկին անդամ չափեց հարթութիւնը, և նոյն եղրակացութեան համեմատ գտաւ։ Ասիկայ մեծ չնորհք մ'էր սոյն գաղափարին որ երթալով գործադրելի կ'երեսար, և արդէն ճեմարանք և հեղինակը կը քննէին զայն, և Եւրոպա սկսեր էր ժողովրդեան մէջ տարածուիլ։ բայց չենք կրնար ըսել թէ արդեօք Արկատոտելի

Հեղինակութը վրայ եղած մնացորդ համարման պատճառաւ կամ ուրիշ բանի մը համար, կրկին հարթաչափութիներն զեռ չէին կրնար համողել, և 1847ին ծախիւք զարգացուցիչ ընկերութեան մը (որոնց մէջ էր նաև վենետիկոյ վաճառականութեան Սենեակն ալ) եղիպտական խառն մասնաժողով մը կազմուեցաւ, և զայն կազմողներն էին՝ փոխարքային կողմանէ վերոյիշեալն Լինան տը Պէլֆոն, և եւրոպացւոց կողմանէ Դալապո և Պուրտոլու գաղղիացի ճարտարապետներն, Սղէֆրնսըն անդիիացին, և Նեկրելի խտալացի ճարտարապետը՝ որ Աւարիացւոց ծառայութե մէջ էր, առաջնորդ երկաթուղեաց վենետիկոյ գաւառին։ Այս մասնաժողովը ոչ միայն հարթաչափութեան խրնդիրը պիտոր լուծէր, այլ և որ կարեռ բագոյնն է, ջրանցքին ճամբուն խնդիրը։ Գալով հարթաչափութեան՝ մասնաժողովն ուրիշ բան չըրաւ բայց եթէ հաստատել առաջի չորս անգամ ետևէ ետև եղած հարթաչափութեան անսխալ ըլլալը, և աս անդամ ալ որոշ վճիռ եղաւ։ իսկ ջրանցքին ճամբուն խնդրոյն մէջ կարծիքնին չմիաբանեցան։ Սղէֆրնսըն կերպով մը իրեն կարծիքը չյայտնեց, Դալապո խոտոր գիծ մը առաջարկեց, որուն մէկ ծայրն Ալեքսանդրիայէն կը սկսէր, իսկ Նեկրելլի և Պուրտոլու հաւանութիւն ցուցուցին ուղիղ գծին զոր առաջարկեր և քններ էր Լինան պէյը (սոյն մականուամբ աւելի ծանօթ է Լինան տը Պէլֆոն), որ իր վերջի քննութեանց ատեն ընկեր առաւ իրեն եղիպտական տէրութեան ծառայող ուրիշ ճարտարապետ մը, որ է Մուճէլ-պէյը։

Կը շարունակո՞ւ։

Չինաց քաղաքականութիւնը
և կրօնքը։

Չինաստան երկար ժամանակ անծանօթ մնաց Եւրոպացւոց, բայց Հռովմայեցիք կասկածեցան անոր կացութեանը վրայ և իրենց աշխարհագիրները Սէրիք անունը սկսան տալ անոր, որ է ըսել մետաքսի երկիր։ վասն զի արևմուտք եկող կարաւանները սկսան անկէ մետաքսէ ազնիւ ու բարակ հիւսուածքներ բերել, իսկ Յուստինիանոս կայսեր ժամանակ ոչ միայն մետաքսի դործածութիւնը յաճախսեր էր յԵւրոպա, այլ և մետաքսագործ թևաւոր որդանց տնտեսութիւնը։ Բուն Չինաստանի տարածութը, առանց Մանչուրիան, Մողոլաց երկիրը, Դիպէզը, Դոնքինն և Քոչինչինն մէկտեղ առնելու 170 հազար փարսախ քառակուսի է, հիւսիսակողմը անապատ, արևմտակողմը բարձրաբերձ լերանց գոտիներ, արևելքէն և հարաւէն Ովկիանոս։

Թէպէտե չկայ տեղ ուր մարդս բնակած ըլլայ և յիշատակներ թողուցած ըլլայ, յիշատակ իր մտաւոր կարծութեանցը, յիշատակ իր կրօնական, հոգեկան և սրտի զգացմանցը, յիշատակ իր դիցաղնական առաքինութեանցը և կրից անգամ, սակայն մարդկանց զանազանութենէն կը հետեւի որ իրենց յիշատակաց մէջն ալ ըլլան զանազանութիւններ։ Չինք ալ թողուցած են յիշատակներ, անբաւ յիշատակներ և տեսակ տեսակ յիշատակներ։ — Ինչպէս անձի մը՝ նոյնպէս ալ բովանդակ աղջի մը պատմութիւնը զիտնալն աղջին էութիւնը ճանչնալ, անոր ոգւոյն մէջ թափանցել է. բայց ալ աւելի մէկը կրնայ ըմբոնել ազգի մը էութիւնը երբ անոր կրօնական և քաղաքական կարդաւորութեանցը վրայ խորհրդածէ, ոչ միանգամ, այլ շատ և ստէպ։

Հայրական և կամ նահապետական իշխանութիւնը Չինաց վարչութեան հիմը և սկիզբն եղած է. ոչ երկար ժա-